

Մայր Աթոռ Ս. Էջմիածին  
Տեղեկատվական Համակարգ  
Հեռ.: (374 10) 517 128  
Հեռախոս: (374 10) 517 301  
Էլ-փոստ: [holysee@etchmiadzin.am](mailto:holysee@etchmiadzin.am)  
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
*Հունիսի 19, 2008 թ.*

**Վերահրատարակություն. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան «Մեծ Պահքի կիրակիների ոսկե շոթան»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը վերահրատարակել է Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի «Մեծ Պահքի կիրակիների ոսկե շոթան» գիրքը:

Այս աշխատության մեջ Շնորհք Պատրիարքն անդրադառնում է Հայ Առաքելական Եկեղեցու առանձնահատկություններից մեկին՝ Մեծ Պահքի կիրակիներին և բացատրում պահեցողության անհրաժեշտությունը քրիստոնյայի կյանքում: Մեծ Պահքի «ոսկե շոթան» ներկայացնում է եղեմական պարտեզից մինչև Գողգոթա տանող ճանապարհը, այսինքն մարդկության փրկության ուղին:

Գիրքն առանձնանում է գեղեցիկ, հյութեղ և պատկերավոր լեզվով, որ նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:

###